



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 24

ԱՍՏՈՒԱԾ՝ ՓԱՌԱԿՈՐ ԹԱԳԱԿՈՐԸ

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու. ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան՝ որ ստութեան անձնատուր չեղաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գալ, ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՜ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: Տէրն է, հզօր եւ անպարտելի, Տէրը, պատերազմէ մէջ անխորտակելի: Ամենակալ Տէրը, ինքն է փառաւոր Թագաւորը:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Բրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ

ԵԼԻՅ Գ. ԳԼՈՒԽ



ԱՍՏՈՒԱԾ ՄՈՎՍԷՍԸ ԿԸ ԿԱՆՉԷ (3:1-6)

Աստուած այնպիսի ձեւեր կ'որդեգրէ պատրաստելու համար այն անձը, որ պիտի նշանակուի Աստուծոյ ծրագիրը յառաջ փանելու: Ահա այդպիսի պատրաստութեան ժամանակահատուած մը պիտի ունենար Մովսէս Մադիամի երկրին մէջ, ուր պիտի պատրաստուէր նախքան վերադառնալու Եգիպտոս եւ Եգիպտոսէն դուրս բերելու Աստուծոյ առաջնորդութեամբ Իսրայէլի ժողովուրդը: Այս իմաստով, Մովսէս պիտի պատրաստուէր ներքնապէս, հոգեպէս ունենալու համար նոր նկարագիր մը, իբրեւ հովիւ՝ առաջնորդ: Միւս կողմէ, Աստուած սպասեց, որ Մովսէս մինչեւ 80 փարեկան ըլլայ որմէ ետք փրոյի անոր այդ կոչումը, որովհետեւ երկրասարդ մը աւելի յախումն կ'ըլլայ եւ շար ալ չափ ու սահման չի դնէր իր խօսքերուն եւ գործերուն միջեւ, իսկ մեծահասակը, աւելի խաղաղ կ'ըլլայ, աւելի յարակ կը դիպէ կացութիւնը եւ աւելի հասուն կը մտածէ: Տակաւին, 80 փարեկանը, որպէսզի անով ցոյց փայ, որ Մովսէս այդ փարիքին ի վիճակէ չէ, ուրեմն կը նշանակէ մարդոց կողմէ անկարելի թուացող երեւոյթը, Աստուած Ինք է որ պիտի միջամտէ ու առաջնորդէ այդ ժողովուրդը դուրս բերելով Եգիպտոսէն: Սա կը նշանակէ, որ ոչ փարիքը եւ ոչ ալ ֆիզիքական ռեւէ երեւոյթ չեն կրնար Աստուծոյ ծրագրին արգելք ըլլալ, երբ Տէրը Ինք է որ կը փնտրի:

Մովսէս մերժեց աշխարհիկ, պալատական բոլոր փեսակի վայելք ու փառք եւ նախընտրեց ըլլալ հովիւ, ապրիլ անապատային դժուարին պայմաններու փակ: Ահա Մովսէս կը փեսնէ Տիրոջ հրեշտակը կրակի բոցով մորենիին մէջ երեւցաւ անոր: Այս Տիրոջ հրեշտակը ուրիշ մէկը չէ եթէ ոչ նոյնինքն Տէրը՝ Յիսուս Քրիստոս:

Մորենին կրակով կը վառէր, բայց չէր սպառէր: Հեղափոխական համեմատութիւն մըն է այստեղ փրոյածը: Կրակը խորհրդանշելով Սուրբ Հոգին: Նաեւ կրակը որպէս լուսաւորող, մտքի ու հոգիի: Անով զԱստուած ճանչնալու, իսկ հոգեւոր լուսաւորութիւնը որ հաւաքքն է, որմէ յոյս եւ սէր կը ծնի: Ինչպէս որ կրակը մարդոց համար փեսանելի է եւ ճանաչելի, բայց երբեք հասանելի: Կրնանք անոր դպիլ, այրիլ եւ փորձառութիւն ունենալ, բայց չենք կրնար անոր մէջ մնալ, նոյնպէս ալ Աստուծոյ պարագային: Միւս կողմէ կրակը սրբութեան պատկերը ունի իր մէջ, մաքրելու, ամէն փեսակի ախար սպառելու: Տակաւին, կ'այրէր բայց չէր սպառէր: Աստուծոյ գիտութիւնն ալ անսահման է ու յաւիտենական: Նախ երեւցաւ յետոյ ձայնը լսուեցաւ: Երեւցածը Մովսէսի հեղափոխութիւնը արթնցուց երթալու եւ փեսանելու, որմէ յետոյ է որ Տէրը խօսեցաւ: Նոյնպէս ալ մեր պարագային նախ երեւոյթները կը յայտնուին, որմէ ետք եթէ երբեք հեղափոխութեամբ ենք այն արեւն Աստուած կը խօսի: Միւս կողմէ փեսանելու եւ լսելու համար աստուածային յայտնութիւնները պէտք է որ հրաժարինք աշխարհիկ եւ աշխարհային կապուածութենէն:

Ըստ Յովհաննէս Դամասկոսցիի, անկէզ Մորենին կը ներկայացնէ Մարիամը, որմէ խօսողը Աստուծոյ Բանը՝ Յիսուս Քրիստոսը, որ մարմնացաւ, բայց Մորենին չէր սպառէր, իսկ Մարիամ յետ ծննդեան կուսութիւնը չկորսնցուց: Միւս կողմէ, այս պատկերը նաեւ կը ներկայացնէ Քրիստոսի մարդեղացումը, ուր Աստուած եւ մարդ կը միանան, բայց աստուածային կրակը այս պարագային չ'այրէր մարդկային բնութիւնը, եւ ոչ իսկ աստուածութենէն բան մը կը պակսի:

Աստուած երբ փեսաւ որ Մովսէս փեսանելու կու գայ ըսաւ. «Մովսէս, Մովսէս»: Ան ալ պատասխանեց. «Ահա հոս եմ»: Այս արտայայտութեամբ ցոյց կը փրոյի Աստուծոյ հայրական ու մտերմիկ ոճը երբ կը դիմէ մարդուն: Միւս կողմէ, Մովսէսի պատասխանը ի փարբերութիւն Ադամի պատասխանէն:

Աստուած ըսաւ. «Հոս մի՛ մօտենար. կօշիկներդ հանէ քու ոտքերդ, որովհետեւ այն փեղը՝ որուն վրայ կայնէր ես, սուրբ երկիր է»: Այս արտայայտութեամբ Աստուած կ'ուզէ բան մը սորվեցնել Մովսէսին, թէ Աստուծոյ դիմաց մարդը ինչպիսի պատկառելի կեցուածք պէտք է ունենայ: Հարցը կօշիկները չեն, այնքան որքան Մովսէսի կեցուածքը, մօտեցումը եւ վերաբերումը: Որովհետեւ ուր որ Աստուծոյ ներկայութիւնն է այնտեղ սուրբ է, որովհետեւ Աստուած Ինք սուրբ է: Ուրեմն Մովսէս պէտք է գիտակցի, որ ինք հիմա պիտի հաղորդ դառնայ սրբութեան հետ: Միւս կողմէ, եկեղեցական հայրերը այդ կօշիկ հանելուն մէջ փեսած են այն խորհուրդը, ուր կօշիկը կը խորհրդանշէ աշխարհը եւ մեղքը, որմէ հրաժարելու էր Մովսէս, որովհետեւ այս երեւոյթները արգելք են, որ չկարենայ փեսանել աստուածային յայտնութիւններն ու հասկնալ Անոր պատգամները: Միւս կողմէ, կօշիկները հանելու եւ անոնց փոխարէն հաւաքով կանգնելու: Ի վերջոյ, վերջին յայտարարութիւն մը, «Ես ես քու հօրդ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբն Աստուածը», այսինքն՝ ողջերուն եւ ոչ թէ մեռածներուն (Ղուկ 20:38):